ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/174

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.10.2019թ. թիվ 26/26-1/17095-2019 գրությամբ «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տնտեսական զարգացման հիմնադրամի 15.10.2019թ. թիվ Ե/01/276-19 գրության հիման վրա, 17.10.2019թ. թիվ 26/26-1/17095-2019 գրությամբ նախաձեռնել է «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/174 ընթացակարգի շրջանակներում 28.10.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.10.2019թ. թիվ Ե/01/276-19 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՀՀ Վայոց Ձորի Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում՝ տանիքով» (հետայսու նաև՝ չափաբաժին 1), «ՀՀ Լոռու մարզի Կուրթանի մշակույթի պալատի վերանորոգում» աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47/48-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ երկու չափաբաժնով (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի արդյունքում չափաբաժին 1-ի մասով ս.թ. ապրիլի 23-ին կնքվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47» ծածկագրով պայմանագիր «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել ս.թ. հոկտեմբերի 20-ը: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝

- ս.թ. օգոստոսի 23-ին Կապալառուին նամակով նախազգուշացվել է իրականացվող աշխատանքների անբավարար ընթացքի և որակի մասին,
- մինչև օրս իրականացվել է նախատեսված շինարարական աշխատանքների ընդամենը 18 տոկոսը, որի համար Կապալառուին 08.07.2019թ. վճարվել է 4 290 323 ՀՀ դրամ, ինչպես նաև այն, որ.
- «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47» պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները կատարվում են այնքան դանդաղ, որ դրանց ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար և հիմք ընդունելով «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47» պայմանագրի 3.1 կետի 3.1.4 (ա) ենթակետի և 6.3 կետի դրույթները՝ լուծվել է 23.04.2019թ. կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47» պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/174 ընթացակարգի շրջանակներում 28.10.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/174 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/174 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ի միջև 23.04.2019թ. կնքվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47» ծածկագրով պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Վայոց Ձորի Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում՝ տանիքով» աշխատանքները (հետայսու՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Պատվիրատուի կողմից 19.09.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.10.2019թ. թիվ 26/26-1/17095-2019 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 15.10.2019թ. թիվ Ե/01/276-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ի միջև 23.04.2019թ. կնքվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47» ծածկագրով պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Վայոց Ձորի Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում՝ տանիքով» աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագրի գինը կազմում է 24 720 420 ՀՀ դրամ:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ աշխատանքների կատարման օրացուցայի գրաֆիկով, աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 180 օր:

Ընկերությանն ուղղված 22.08.2019թ. գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ շին աշխատանքների կատարման որակը և տեմպերը գոհացուցիչ չեն՝ ինչը վտանգում է ծրագրի ավարտը պայմանագրով նախատեսված ժամանակին՝ 09.11.2019թ.: Նույն գրությամբ Պատվիրատուն նախազգուշացրել է, որ եթե մինչև 26.08.2019թ. ընկած ժամանակահատվածում չվերականգնվի շին աշխատանքների նորմալ ընթացքը, ապա ՀՏՋՀ-ն իրեն իրավունք է վերապահում ս.թ. 10.09.2019թ. լուծել Ընկերության հետ կնքված կապալի պայմանագիրը և կիրառել պայմանագրով նախատեսված բոլոր տույժերը և տուգանքները:

Ընկերությանն ուղղված գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 2019թ. նոյեմբերի 9-ը, սակայն հաշվի առնելով, որ ս.թ. օգոստոսի 23-ին Ընկերությանը նամակով նախազգուշացվել է իրականացվող աշխատանքների անբավարար ընթացքի և որակի մասին, ինչպես նաև այն, որ մինչ օրս իրականացվել է նախատեսված աշխատանքների ընդամենը 18 տոկոսը և որ Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները կատարվում են այնքան

դանդաղ, որ դրանց ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, ուստի Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1 կետի 3.1.4 (ա) ենթակետի և 6.3 կետի դրույթները, որոշել է լուծել «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ի հետ 23.04.2019թ. կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47» պայմանագիրը:

Պատվիրատուին կողմից 19.09.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը***:

Պայմանագրի 3.1.4-րդ ենթակետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը*** և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, **եթե**.

ա) ***Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,***

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Այսպիսով՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ի միջև 23.04.2019թ. կնքված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 180 օրյա ժամկետում իրականացնել 24 720 420 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ

աշխատանքներ, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չեն իրականացվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները և Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ, համաձայն հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրության՝ իրականացվել են 4 516 129 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ աշխատանքներ:

Այսպիսով՝ վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.10.2019թ. թիվ 26/26-1/17095-2019 գրությամբ «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**